

Հ ա ս տ ա տ վ ա ծ Է՝

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի
գիտխորհրդի 2015 թ. մարտի 10-ի նիստում:
Արձանագրություն № 01-03/15

գ ի տ խ ո ռ հ ի դ ի ն ա խ ա գ ա հ , ռ ե կ տ ո ռ ՝

Գ. Շ. Գ ա լ ս տ յ ա ն

Կ Ա Ր Գ

**«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԸՆՏՐՈՎԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

I. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը սահմանում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) թափուր կամ նոր ստեղծված ընտրովի պաշտոնների, այլ մարմինների կազմի ընտրության (այսուհետ՝ ընտրովի պաշտոններ) մրցույթին մասնակցելու պայմանները, հավակնորդների առաջադրման և ընտրության, ինչպես նաև մրցույթում հաղթող անձի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը:

1.2. Համալսարանի ընտրովի պաշտոնների ընտրությունը կատարվում է մրցույթով: Մրցույթը կազմակերպում է Համալսարանի գիտական խորհուրդը (այսուհետ՝ գիտական խորհուրդ)՝ խորհրդի նիստում, փակ գաղտնի քվեարկությամբ: Մրցույթում հաղթող անձը պաշտոնում ընտրվում է 5 տարի ժամկետով: Մրցույթում հաղթող անձինք պաշտոնի են նշանակվում՝ Համալսարանի ռեկտորի հրամանով և նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով:

II. Համալսարանի ընտրովի պաշտոնները

2.1. Համալսարանում մրցույթով ընտրվում են՝

- 1) Ֆակուլտետի դեկանը.
- 2) Ամբիոնի վարիչը.
- 3) Քոլեջի տնօրենը.
- 4) Ավագ դպրոցի տնօրենը.
- 5) Պրոֆեսորադասախոսական կազմը, որն ընդգրկում է հետևյալ պաշտոնները՝
 - ա) պրոֆեսորի,
 - բ) դոցենտի,
 - գ) ասիստենտի,
 - դ) դասախոսի,
 - ե) ուսուցչի:
- 6) Գիտական խորհրդի որոշմամբ այլ աշխատողները:

2.2. Ավագ դպրոցի տնօրենն ընտրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մրցութային կարգով: Տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցութին կարող է մասնակցել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և դպրոցի ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստացած անձը:

2.3. Քոլեջի տնօրենն ընտրվում է մրցույթով:

2.4. Ուսուցչի ընտրությունն իրականացվում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի ուսուցչի՝ «Մրցութային ընթացակարգով ընտրության մասին» կարգով:

III. Մրցութին մասնակցելու հիմնական պայմանները

3.1. Մրցութն անցկացվում է «Հիմնադրամների մասին», «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին ու Համալսարանի կանոնադրությանը համապատասխան:

3.2. Մրցույթին մասնակցելու պայմանները՝ հավակնորդի անձնական հատկանիշներին առաջադրվող պահանջներն են՝ գիտական աստիճան, գիտական կոչում, մասնագիտություն, աշխատանքային ստաժ և այլ պահանջներ, որոնք հրապարակվում են ընտրովի պաշտոնի մրցույթի անցկացման հայտարարությունում:

3.3. Մրցույթի անցկացման պայմանների մասին հայտարարությունը հրապարակվում է առնվազն 2000 տպաքանակով զանգվածային լրատվական միջոցներում: Մրցույթին մասնակցելու փաստաթղթերը ներկայացնելու համար, որպես կանոն սահմանվում է մեկ ամիս ժամկետ՝ մրցույթն անցկացնելու մասին հայտարարության հրապարակման հաջորդ օրվանից: Հայտարարության ձևը սահմանված է սույն կանոնակարգի թիվ 1 հավելվածում: Մրցույթի անցկացման ժամկետը (օրը) որոշում է համալսարանի գիտական խորհուրդը: Մրցույթի անցկացման օրը նշանակվում է լրացուցիչ հայտարարությամբ:

3.4. Հավակնորդները սույն կանոնակարգի 3.3 կետում նշված մեկամսյա ժամկետում Համալսարանի ընդհանուր բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

- ա) դիմում համալսարանի ռեկտորին,
- բ) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- գ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- դ) երկու լուսանկար 3x4 չափի,
- ե) աշխատանքային գրքույկի պատճենը՝ վավերացված հիմնական աշխատանքի վայրում,
- զ) համառոտ ինքնակենսագրություն,
- է) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող կամ ասպիրանտուրան ավարտելու մասին կամ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման մասին փաստաթղթերի պատճենները,
- ը) տպագրված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների սահմանված կարգով հաստատված ցուցակը,
- թ) բնութագիր հիմնական աշխատանքի վայրից:

3.5. Հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե չի պահպանված դիմումի ներկայացման ժամկետը:

3.6. Ընդհանուր բաժինը գրանցում է հավակնորդներից ստացված փաստաթղթերը և զեկուցագրով ներկայացնում է համալսարանի ռեկտորին: Համալսարանի ռեկտորն ուսումնասիրում է ստացված փաստաթղթերը և դրանք հանձնում գիտական խորհրդի քարտուղարին:

3.7. Համալսարանի գիտական խորհրդի քարտուղարը հավակնորդների ներկայացրած փաստաթղթերը, հայտարարության պահանջներին բավարարելու դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է նախնական քննարկման՝ կարծիք ստանալու նպատակով:

Փաստաթղթերը նախնական քննարկման են հանձնվում՝

ա) ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար՝ ուսումնական գծով պրոռեկտորին, ով կազմակերպում է հավակնորդների նախնական քննարկում ֆակուլտետի գիտական խորհրդում: Որոշումը և փաստաթղթերը սահմանված ժամկետում հանձնվում են համալսարանի գիտական քարտուղարին:

բ) ամբիոնի վարիչի պաշտոնի համար՝ համապատասխան ֆակուլտետ, որի դեկանը կազմակերպում է հավակնորդների նախնական քննարկում համապատասխան ամբիոնում և ֆակուլտետի գիտական խորհրդում, համահամալսարանական ամբիոնի վարիչի պաշտոնի համար՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին, ով կազմակերպում է հավակնորդների քննարկում ուսումնական մասում: Որոշումները փաստաթղթերի հետ սահմանված ժամկետում հանձնվում են համալսարանի գիտական քարտուղարին:

գ) պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնի համար՝ համապատասխան ամբիոն՝ քննարկման և կարծիք տալու համար:

3.8. Հավակնորդների վերաբերյալ կարծիքները վավերացվում են համալսարանի ուսումնական գծով պրոռեկտորի կողմից և 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում գիտական խորհրդի քարտուղարին՝ քննարկելու համար:

3.9. Եթե հավակնորդի տվյալները չի բավարարում մրցույթի հայտարարությունում նշված պայմաններին և պահանջներին, ապա հավակնորդի թեկնածությունը չի ներկայացվում գիտական խորհրդի քննարկմանը և ուսումնական գծով պրոռեկտորի գրավոր եզրակացությամբ մերժվում է հավակնորդի առաջադրումը: Ընտրության օրվանից առնվազն

5 օր առաջ այդպիսի մերժում չստացած թեկնածուի մասնակցությունը մրցույթին համարվում է թույլատրված:

3.10. Հավակնորդի առաջադրումը մերժելու մասին եզրակացությունը կարող է բողոքարկվել Համալսարանի գիտական խորհրդի նախագահին (ռեկտորին) մեկ օրվա ընթացքում: Գիտական խորհրդի նախագահը ստացված բողոքը քննարկում և բողոքը բավարարելու կամ մերժելու մասին որոշում է ընդունում ոչ ուշ, քան մրցույթի անցկացման օրվանից 3 օր առաջ:

3.11. Համալսարանի գիտական քարտուղարը այբբենական կարգով կազմում է մրցույթի հավակնորդների վերջնական ցուցակը, որում նշվում են նաև գիտական աստիճանը և կոչումը, հայցվող պաշտոնը: Ցուցակը, մրցույթի օրվանից ոչ ուշ, քան 2 օր առաջ, հրապարակվում է Համալսարանում (փակցվում է հայտարարությունների տախտակին):

IV. Մրցույթով ընտրովի պաշտոնների հավակնորդները

4.1. Ընտրովի պաշտոնի հավակնորդն առաջադրվում է ինքնաառաջադրմամբ:

4.2. Ընտրովի պաշտոններին կարող են հավակնել այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն սույն կարգով սահմանված նախընտրած պաշտոնին համապատասխան հատկանիշներ:

4.3. Ընտրովի պաշտոնում չի կարող ընտրվել՝

1) այն անձը, ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար և նրա դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

2) այն անձը, որին օրենքով արգելված է զբաղվել գիտամանկավարժական գործունեությամբ:

4.4. Համալսարանի ընտրովի պաշտոններին կարող են հավակնել.

ա) համալսարանի ֆակուլտետի դեկանի պաշտոնում՝ պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում, գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք:

բ) ֆակուլտետի դեկանն ընտրվում է փակ (ներբուհական) մրցույթի հիման վրա: Դեկանի թեկնածուի տարիքը չի կարող գերազանցել 65 տարին: Ֆակուլտետի դեկանի

Թեկնածությունը քննարկում և գիտական խորհրդի ընտրությանն է ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհուրդը:

գ) ամբիոնի վարիչի պաշտոնում՝ պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում, գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք: Ամբիոնի վարիչն ընտրվում է Բաց մրցույթի հիման վրա:

դ) պրոֆեսորի պաշտոնում՝ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք,

ե) դոցենտի պաշտոնում՝ պրոֆեսորի կամ դոցենտի կամ ավագ գիտաշխատողի գիտական կոչում ունեցող անձինք,

զ) ասիստենտի պաշտոնում՝ պրոֆեսորի կամ դոցենտի կամ ավագ գիտաշխատողի գիտական կոչում կամ համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան ունեցող կամ ասպիրանտուրան ավարտած անձինք,

է) սույն կարգի սահմաններում ասպիրանտուրան ավարտած անձին հավասարազոր համարվում են այն անձինք, ովքեր սովորել են ասպիրանտուրայում կամ հայցորդության կարգով հանձնել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված որակավորման քննություններ (մինիմումներ):

ը) դասախոսի պաշտոնում՝ պրոֆեսորի կամ դոցենտի (ավագ գիտաշխատողի) գիտական կոչում կամ գիտական աստիճան ունեցող կամ ասպիրանտուրան ավարտած կամ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

4.5. Բացառիկ դեպքերում՝ գծանկարի, զուսանկարի և քանդակի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ամբիոններում դոցենտի և պրոֆեսորի պաշտոնում կարող են ընտրվել նաև գիտական աստիճան և կոչում չունեցող, տվյալ բնագավառում հանրաճանաչ անձինք:

V. Մրցույթի անցկացման ընթացակարգը և քվեարկության կարգը

5.1. Ընտրովի պաշտոնների մրցույթն իրականացվում և քվեարկությունը կատարվում է գիտական խորհրդի նիստում՝ գիտական խորհրդի կանոնակարգով սահմանված կարգով: Մրցույթն իրականացվում է մրցույթի անցկացման մասին լրացուցիչ հրապարակված հայտարարությունում նշված օրը:

5.2. Թեկնածուն իրավունք ունի բողոքարկել ընտրության արդյունքները: Այդ դեպքում.

- 1) ընտրությունից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում թեկնածուն գրավոր հիմնավորված բողոքը ներկայացնում է բողոքարկող հանձնաժողովին, որը յոթօրյա ժամկետում տալիս է գրավոր եզրակացություն,
- 2) բողոքարկող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Համալսարանի գիտական խորհրդի քարտուղարը (նախագահ), ռեկտորի ներկայացուցիչը (նախագահի տեղակալ), իրավաբանական բաժնի ներկայացուցիչը, արհկոմի նախագահը, ուսխորհրդի նախագահը,
- 3) բողոքարկող հանձնաժողովը իրավասու է քննարկել բողոքը, եթե ներկա են հանձնաժողովի հինգ անդամներից առնվազն չորսը: 3-օրյա ժամկետում քվորում չապահովելու դեպքում հրավիրվում է գիտական խորհրդի արտահերթ նիստ տվյալ բողոքի քննարկման նպատակով ժամանակավոր բողոքարկող հանձնաժողով ստեղծելու օրակարգով:

VI. Մրցույթի հաղթողին պաշտոնի նշանակելը

6.1. Մրցույթի հաղթող ճանաչելու մասին գիտական խորհրդի որոշումն ստանալուց հետո Ռեկտորը, քննարկելով մրցույթի արդյունքները, իրավասու է.

- 1) Մրցույթի հաղթողի հետ կնքել աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով.
- 2) Գրավոր պատճառաբանված որոշմամբ, մերժել մրցույթի հաղթողին պաշտոնի նշանակելը և Համալսարանի գիտական խորհրդի քարտուղարին վերադարձնել ստացված փաստաթղթերը:
- 3) Մրցույթի անցկացման գործընթացում խախտումներ բացահայտելու դեպքում առաջարկել գիտխորհրդին անվավեր ճանաչել ընտրության արդյունքները:

6.2. Ընտրության վերջնական արդյունքում թափուր տեղեր առաջանալու դեպքում Ռեկտորը իրավասու է մինչև 1 տարի ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքել տվյալ ճյուղի փորձառու մասնագետի հետ (առանց տարիքային սահմանափակման) մինչև տվյալ պաշտոնի ընտրության համար հերթական մրցույթում հաղթողի ընտրությունը:

6.3. Մրցույթում հաղթող ճանաչված անձը պաշտոնի է նշանակվում համալսարանի ռեկտորի հրամանով և նրա հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով:

6.4.Ընտրովի պաշտոնում նշանակված աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի և համալսարանի միջև, ըստ որի՝ աշխատողը պարտավորվում է համալսարանի համար կատարել իր պաշտոնին համապատասխան աշխատանք՝ պահպանելով համալսարանում սահմանված աշխատանքային կարգապահությունը, իսկ համալսարանը պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշվող աշխատանքը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

6.5.Աշխատանքային պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին:

6.6.Աշխատանքային պայմանագիրը կնքվում է գրավոր, երկու օրինակից՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

6.7.Աշխատանքի անցնելուց առաջ համալսարանի լիազորված անձը աշխատանքային պայմանագրին համապատասխան աշխատողին ծանոթացնում է աշխատանքի պայմաններին, ներքին կարգապահության կանոններին, աշխատավայրում նրա աշխատանքը կանոնակարգող համալսարանի այլ իրավական ակտերին:

6.8.Աշխատողը պարտավոր է աշխատանքային պայմանագրում նշված օրն անցնել աշխատանքի:

6.9.Աշխատանքային պայմանագրում նշվում են՝

- 1) մրցույթում հաղթող աշխատողի մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը.
- 2) աշխատանքային պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
- 3) աշխատողի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը.
- 4) համալսարանի և ռեկտորի անունը և ազգանունը.
- 5) կառուցվածքային ստորաբաժանումը.

- 6) աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- 7) պաշտոնի անվանումը.
- 8) աշխատանքային գործառույթները.
- 9) աշխատավարձի չափը և այն որոշելու ձևը.
- 10) սահմանված կարգով տրվող հավելումները, հավելավճարները և լրավճարները.
- 11) աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը.
- 12) աշխատաժամանակը և կողմերի իրավունքներն ու պարտավորությունները.
- 13) կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրում կարող են ներառվել նաև այլ պայմաններ:

VII. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում համալսարանի գիտական խորհրդի որոշումը համալսարանի ռեկտորի կողմից հաստատելու հաջորդ օրվանից:

7.2. Սույն կարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

7.3. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համալսարանի կանոնադրությամբ:

7.4. Ուժը կորցրած համարել Համալսարանի գիտական խորհրդի 02.12.2008թ. թիվ 10 նիստում հաստատված «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ղեկավար պաշտոնների տեղակալման» մասին ընթացակարգը, «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների մրցույթով տեղակալման» մասին կարգը:

Գիտական քարտուղար՝

Լ. Հ. Լևոնյան

10 մարտի 2015թ.

գիտխորհրդի որոշում № 01-03/15

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ճարտարապտության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը հայտարարում է բաց մրցույթ համալսարանի _____ պաշտոնի համար

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի _____ պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության գործունակ այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

- ա) _____,
- բ) _____,
- գ) _____,
- դ) _____:

_____ պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) գրավոր դիմում (համալսարանի ռեկտորի անունով),
- բ) երկու լուսանկար 3x4 չափսի,
- գ) աշխատանքային գրքույկի պատճենը՝ վավերացված հիմնական աշխատանքի վայրում,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- զ) գիտական աստիճանը և գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (եթե առկա են),
- է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- ը) անձնագրի լուսապատճենը,
- թ) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- ժ) զինվորական գրքույկ կամ զինապարտության մասին փաստաթուղթ:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացնել 201_թ.-ից մինչև 201_թ.-ը ժամը՝ 10-ից 13-ը (բացի շաբաթ և կիրակի օրերից), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ընդհանուր բաժին:

Հասցեն՝ Տեղյան 105, 2-րդ մասնաշենք, հեռախոս՝ 58-72-84:

Քվեաթերթ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»
 հիմնադրամի _____ ընտրության

Քվեարկելու դեպքում քվեարկողն իր նախընտրած թեկնածուի ազգանվան դիմացի «կողմ եմ» բառի դիմաց առկա վանդակում նշում է V-աձև նշան, իսկ դեմ քվեարկելու դեպքում նույն V-աձև նշանը նշում է «դեմ եմ» բառի դիմաց առկա վանդակում: Այդ վանդակներում և քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

h/h	Հավակնորդի ազգանունը, անունը, հայրանունը	Քվեարկություն	
		Կողմ եմ <input data-bbox="1016 1035 1151 1108" type="checkbox"/>	Դեմ եմ <input data-bbox="1302 1035 1437 1108" type="checkbox"/>

Արձանագրություն N°

Տնօրենության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հիմնադրամի _____ ընտրության հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

- 1.
- 2.
- 3.

Ամփոփելով 201_թ. _____-ին համալսարանի _____ ընտրության արդյունքները պարզեց.

ընտրությունը տեղի է ունեցել 2014թ. _____-ին, ժամը __:00-ից մինչև __:00-ը: Ընտրողների ցուցակում ընդգրկված են _____ ընտրող: Հանձնաժողովը, բացելով փակ գաղտնի քվեարկության քվեատուփը, պարզեց.

- 1. փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար քվեաթերթիկներ են ստացել _____ ընտրող,
- 2. քվեարկությանը մասնակցել են _____ ընտրող,
- 3. քվեատուփում հայտնաբերվել է _____ քվեաթերթիկ,
- 4. անվավեր են ճանաչվել _____ քվեաթերթիկ,
- 5. ըստ քվեարկության արդյունքների՝ հավակնորդներն ստացել են հետևյալ ձայները՝
 - 1) ձայն,
 - 2) ձայն,
 - 3) ձայն,
 - 4) ձայն,
 - 5) ձայն:

Այսպիսով՝ քվեարկության արդյունքում առավել քանակությամբ կողմ ձայներ է ստացել և _____ ընտրվել.

..... ձայն:

Ընտրական հանձնաժողովի նախագահ
անդամներ՝
